

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Պաքուն Դարձած է Ջազգրգիռ

Դրժեղով Արեւմտեան կեդրոններուն իր տուած խոստումները, Ալիե իր զօրքերը ուղարկեց Արցախի վրայ, աւելի քան 100 հազար ժողովուրդ ենթարկելով բռնի տեղահանութեան: Ատրպէյճանի այս վարքագիծը աննկատ չմնաց Եւրոպական մայրաքաղաքներու եւ Ուաշինգթոնի մէջ, որոնք ամբողջութեամբ կորսնցուցին իրենց վստահութիւնը Պաքուի նկատմամբ:

Իրադարձութիւնները բաւականին արաք զարգանալով Եւրոպական Միութիւնը, Եւրոպական Յանձնաժողովը եւ Միացեալ Նահանգներու դիւանագիտութիւնը խորհրդակցութիւններ ունենալով սկսան համադրուած աշխատանքի՝ կանխելու համար որեւէ ոսնձգութիւն Հայաստանի սահմաններէն ներս: Պաքուին հասցեագրուած զգուշացումներուն անմիջապէս յաջորդեց Հայաստանի եւ Ֆրանսայի միջեւ կնքուած ռազմական գետնի վրայ համագործակցութեան համաձայնութեան ստորագրումը: Շատ չանցած զէնքերու առաջին տեսակահինները հասան Հայաստան: Ամերիկայի Ծերակոյտը միաձայն ընդունեց Հայաստանի անվտանգութեան ապահովման միտուած արձանագրութիւնը. որ երկու տարի ժամկետով կ'առաջարկէ ԱՄՆ նախագահին կասեցնել 1992 թուականին ընդունուած յայտնի՝ «Ազատութեան աջակցութեան արձանագրութեան» 907 ենթաբաժինը շրջանցելու իրաւունքի կիրառումը, որ, փաստորէն, կը կատարուէր Ատրպէյճանին ամերիկեան ռազմական օգնութիւն տրամադրելու համար: Աւելին, սահմանափակում հաստատուեցաւ Ատրպէյճանցի դիւանագետներու Միացեալ Նահանգներ այցելութեան կապակցութեամբ:

Անակնկալի եկած Պաքուն կը փորձէ կոշտ վերաբերմունք ցուցաբերել բոլորի նկատմամբ՝ նախ մեղադրելով Արեւմտեան երկիրները կողմնակալ վերաբերմունք ցուցաբերելու համար ու ապա կը մերժէ մասնակցիլ Պրուքսելեան եւ Ուաշինգթոնեան հարթակներով Հայաստանի հետ հանդիպումներուն: Փոխարէնը ան կ'առաջարկէ երկկողմանի բանակցութիւններ սկսիլ, որոնք նպաստաւոր են միայն Ատրպէյճանական կողմին համար: Երեւան լաւ գիտէ որ, կարելի չէ ապաւինիլ Պաքուի հետ որեւէ համաձայնութեան՝ առանց միջազգային գործնա-

ԱՄՆ Պիտի Կիրառէ Իր Ձեռքը Եղած Ամբողջ Գործիքակազմը՝ Խափանելու Պաքուի Ու Երեւանի Միջեւ «Ոչ-խաղաղ ճանապարհով» Առեւտրային Ուղիներու Վերաբացումը. Օ՞րայըն

ԱՄՆ Պետական Քարտուղարութեան բարձրատիճան ներկայացուցիչը նախագգուշացուցած է՝ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ ոչ-խաղաղ ճանապարհով՝ առեւտրային ուղիներու վերաբացման պարագային, ԱՄՆ պիտի կիրառէ իր տրամադրութեան ներքոյ եղած ամբողջ գործիքակազմը՝ խափանելու զայն:

Մասնաւորապէս, նման յայտարարութիւն ըրած է Եւրոպայի ու Եւրասիոյ Հարցերով ԱՄՆ պետական քարտուղարի տեղակալ ձէյմզ Օ՞րայընը՝ լրագրողներու հետ առցանց հարցուպատասխանի ժամանակ, երբ անդրադարձած է նաեւ Հարաւային Կովկասին, ու մասնաւորապէս՝ Հայաստանի ու Ատրպէյճանին միջեւ հակամարտութեան:

«Կը տեսնենք, որ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ խաղաղութիւն հաստատելու իրական հնարաւորութիւն [կայ]: Ուրախ ենք,



ԱՄՆ պետական քարտուղարի տեղակալ ձէյմզ Օ՞րայըն

որ երկու կողմերուն միջեւ առկայ է ուղիղ եւ միջնորդաւորուած երկխօսութիւն: [Խաղաղութեան հաստատումը] ամբողջ տարածաշրջանին համար օգուտ քաղելու իրական հնարաւորութիւն պիտի ըլլայ:

Օրինակ, եթէ հնարաւորութիւն ըլլայ կեդրոնական Ասիայէն ուղղել առեւտուրի հոսքը Ատրպէյճանով ու Հայաստանով դէպի Թուրքիա, ապա այն էական խթան պիտի հանդիսանայ այդ առեւտրային ճանապարհին ինկած բոլոր երկիրներուն համար: Կ'ողջունենք, որ այդ ամէնին մասը դառնալու հնարաւորութիւն կայ: Միեւնոյն ժամանակ, եթէ որոշում կայացուի զայն իրականացնել ոչ-խաղաղ ճանապարհով, ապա ստիպուած պիտի ըլլանք օգտագործել մեր տրամադրութեան ներքոյ ունեցած բոլոր գործիքները, որպէսզի խոստափինք նման առեւտրային ճանապարհի ստեղծումէ: Բաւականաչափ յստակ եղած ենք կողմերուն հետ, թէ այստեղ ինչի յոյս ունինք, ինչպէս նաեւ [խօսած ենք] այլ կերպ յառաջարկելու հետեւանքներուն մասին: Այսպիսով, անհամբեր կը սպասուինք:

«Հայաստան» Հիմնադրամի Թելեթոնին Հանգանակուած է 8.4 Միլիոն Տոլար



Նոյեմբեր 23-ին «Քեզ համար, Հայաստան» խորագրով տեղի ունեցած «Հայաստան» համահայկական հիմնադրամի 26-րդ հեռուստամարաթոնի ընթացքին հաւաքագրուած է շուրջ 8,4 միլիոն տոլար: Այս մասին հաղորդած է Հիմնադրամը՝ յաւելելով, որ դրամահաւաք-միջոցառումները դեռ կը շարունակուին, իսկ վերջնական արդիւնքները պիտի ամփոփուին տարեկերջին:

Հաղորդագրութեան համաձայն՝ «Հեռուստամարաթոն 2023»-ի ծիրին մէջ Հայաստանի մէջ հանգանակուած է 552 հազար 372 տոլար, Ֆրանսայի տեղական մարմինը հաւաքագրած է 3 միլիոն 250 հազար տոլար, ԱՄՆ տեղական մարմինը՝ 3 միլիոն 100 հազար տոլար, Թորոնթոյի (Գանատա) տեղական մարմինը՝ 500 հազար տոլար, Բրիտանիոյ տեղական մարմինը՝ 450 հազար տոլար, Արժան-

թիւնի տեղական մարմինը՝ 160 հազար 690 տոլար, ինչպէս նաեւ նուիրատուութիւններ կատարուած են Հոլանտայէն՝ 100 հազար տոլար, Պրագիէն՝ 92 հազար տոլար, Գերմանիայէն՝ 66 հազար 400 տոլար, Զուիցերիայէն՝ 50 հազար տոլար, Աւստրալիայէն՝ 27 հազար տոլար, Աւստրիայէն՝ 25 հազար 900 տոլար, Ռումանիայէն՝ 4 հազար 360 տոլար:

«Քեզ համար, Հայաստան» խորագրով հեռուստամարաթոնի դրամական միջոցները պիտի ուղղուին Արցախէն բռնի տեղահանուած մեր հայրենակիցներու կենսապայմաններու բարելաւման, ինչպէս նաեւ սահմանային համայնքներու զարգացման ուղղուած ծրագրերու ֆինանսաւորման», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

«Շնորհակալ ենք մեր տեղա-

Դատախազութիւնը Կը Պահանջէ Ռոպերթ Քոչարեանէն Բռնագանձել 20 Շէնքեր՝ Հիւսիսային Եւ Այլ Պողոտաներու Վրայ

Հակափտածութեան դատարանին մէջ մեկնարկած է ՀՀ 2-րդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի եւ անոր ընտանիքին գործով դատավարութիւնը: Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վարչութիւնը Ռոպերթ Քոչարեանէն եւ անոր ընտանիքի անդամներէն յօգուտ պետութեան կը պահանջէ բռնագանձել վերջիններուս ենթադրեալ ապօրինի համարուող գոյքը:

Ռոպերթ Քոչարեանի վերաբերեալ հայցադիմումով պատասխանող են Ռոպերթ Քոչարեանը, վերջինիս կինը՝ Պելլա Քոչարեանը, որդիները՝ Լեւոն եւ Սեդրակ Քոչարեանները, վերջիններուս կանայք՝ Սիրանոյշ Քոչարեանը (երգչուհի Սիրուշօ), Զարուհի Բաղալեանը, աղջիկը՝ Գայիանէ Քոչարեանը, վերջինիս ամուսինը՝ Վիգէն Զատինեանը:

Ներկայացուած միւս հայցադիմումով պատասխանող են Սեդրակ Քոչարեանն ու կինը՝ Զարուհի Բաղալեանը: Նշենք, որ Դատախազութեան կողմէ նախնական ուսումնասիրութեան արդիւնքով ապօրինի դիտարկուած է Եւ ապահովման միջոց կիրառուած է 20 անշարժ գոյքի նկատմամբ,

ԼՈՒՐԵՐ

Պետութիւնը Կը Փորցէ Բռնագանձել Գազիկ Ծառուկեանի Որոշ Ունեցուածք

79 անշարժ գոյք, 42 փոխադրամիջոց, 213 միլիոն տոլար, բաժնեմասեր մօտ 40 ընկերութիւններու մէջ. պատկառելի այս ունեցուածքը պետութիւնը կ'ուզէ բռնագանձել Հայաստանի ամենահարուստ մարդոցմէ՝ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) առաջնորդ Գազիկ Ծառուկեանէն:



«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) առաջնորդ Գազիկ Ծառուկեան

Երեք տարի տեւած ուսումնասիրութեանէ յետոյ Գլխաւոր Դատախազութիւնը դատարան դիմած է՝ եզրակացնելով, որ այս կարողութիւնը Ծառուկեանն ու ընտանիքի 11 անդամները ապօրինի կուտակած են:

«Գլխաւոր Դատախազութիւնը դատարանին խնդրել է Գազիկ Ծառուկեանից եւ նրան փոխկապակցուած անձանցից բռնագանձել թուով 42 փոխադրամիջոց, 8 փոխադրամիջոցի ձեռքբերման արժէք՝ մօտ 348 միլիոն դրամ, զիջուած պահանջի իրաւունքի գումար՝ շուրջ 33 միլիոն դրամ, թիւով 79 անշարժ գոյք եւ 10 անշարժ գոյքի շուկայական արժէք», Հանրային հետզրոյցին ըսած է դատախազ Համլէթ Յարութիւնեանը:

Դատախազը պարզաբանած է, որ ապօրինի գնահատած են Ծառուկեանի՝ Աբովեան տանող ճանապարհի շքեղ առանձնատունը, «Մուլթի Կրուկ» առեւտրա-արդիւնաբերական ձեռնարկութեան, «Կենտրոն» հեռուստաընկերութեան, «Եւրոմոնթոր»-ի, «Արարատ ցեմէնտ»-ի, Երեւանի Արարատ քոնեակի, գինիի, օղիի գործարանի բաժնետոմսերը: Ի պատասխան, փաստաբաններ-

ընդ խումբը հակադարձած է՝ Ծառուկեանը իր կարողութիւնը կուտակած է արդար քրտինքով:

«Պաշտպանական խումբը հաւաստիացնում է, որ Գազիկ Ծառուկեանի գոյքերի ծագումն օրինական է, դրանց վերաբերեալ առկայ են ծանրակշիռ ապացոյցներ, որոնք հնարաւորինս սեղմ ժամկէտներում կը ներկայացուեն դատարան եւ Գլխաւոր Դատախազութիւն», յայտնած են փաստաբանները՝ դեռեւս չբանալով փակագիծերը, թէ ինչ հակափաստարկներ ու ապացոյցներ ունին եւ ինչու գանտք չեն հրապարակեր: Անոնք չուզեցին մանրամասնութիւններ ներկայացնել «Ազատութեան»՝ խոստանալով այդ ընել յաւաքիկային:

Հայաստանի Տնտեսական Աշխուժութեան Յուսանիշը Տասը Ամսուան Մէջ Աճած Է 9,2 Տոկոսով

Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2023 թուականի Յունուար-Հոկտեմբեր ամիսներուն 9,2 տոկոսով աւելցած է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին նկատմամբ: Այս մասին կը փաստեն ՀՀ Վիճակագրական կոմիտէի հրապարակած տուեալները:

Արդիւնաբերական արտադրանքին ծաւալը այս տարուան Յունուար-Հոկտեմբերին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ նուազած է 0,5 տոկոսով:

Շինարարութեան ծաւալը 2023-ի 10 ամիսներուն նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ աւելցած է 16,4 տոկոսով:

Առեւտրի շրջանառութեան մէջ Յունուար-Հոկտեմբերին 2022-ի Յունուար-Հոկտեմբերի նկատմամբ աւելացումը կազմած է 23,3 տոկոս: Նոյն ժամանակահատուածին մատուցուած ծառայութիւններուն ծաւալը աւելցած է 12,1 տոկոսով:

Հայաստանի Պետական Պարտքը 9 Ամսուան Մէջ Աճած Է 6,4 Տոկոսով

Հայաստանի պետական պարտքը 2023 թուականի 9 ամիսներու արդիւնքով կազմած է 4 թրիլիոն 454 միլիարդ դրամ (11 միլիարդ 322 միլիոն տոլար): Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ պիւտճէական հարցերու մշտական յանձնաժողովի նիստին ընթացքին այս մասին ըսաւ ելեւմուտքի փոխնախարար Վահան Սիրունեանը 2023 թուականի պետական պիւտճէի ինն ամիսներու կատարման ընթացքին վերաբերեալ տեղեկանքի քննարկման ընթացքին:

«Դրամային եւ տոլարային արտայայտութեամբ ՀՀ պետական պարտքը 2023թ. 9 ամիսներին ընթացքում աճել է 6,4 տոկոսով: Այն աճել է համամասնորէն, քանի որ փոխարժէքն, ըստ էութեան, նախորդ տարուայ տարեվերջի համեմատ մեծ տատանում չի ունեցել:

Լեռնային Ղարաբաղէն Բռնի Տեղահանուած 6626 Անձ Հիմնական Լքած Է Հայաստանը

2023 թուականի Նոյեմբեր 26-ի դրութեամբ Հայաստանի Հանրապետութեան պետական սահմանի օղակին եւ ցամաքային անցման կէտերով Հայաստանի Հանրապետութեան մեկնած է Լեռնային Ղարաբաղի հաշուառում ունեցող 10 հազար 929 անձ, որոնցմէ 4303-ը վերադարձած են: Այս մասին «Հայկական ժամանակ»-ին յայտնած են ՀՀ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան:

Փաստօրէն, ԼՂ-էն բռնի տեղահանուած 6626 անձ հիմնական լքած է Հայաստանը:

Յիշեցնենք, որ Լեռնային Ղարաբաղէն Հայաստան բռնի տեղահանուած էր 108 հազարէն աւելի անձ:

Արցախի Նախագահ Սամուէլ Շահրամանեանը Աժ ՔՆՆԻԿ Յանձնաժողովին Մէջ Կարեւոր Բացայայտումներ Ըրած Է

Արցախի վերջին նախագահ Սամուէլ Շահրամանեանը անցեալ շաբաթ ներկայացաւ Ազգային ժողովին մէջ տեղի ունեցած 44-օրեայ պատերազմին հանգամանքները ուսումնասիրող Քննիչ Յանձնաժողովի նիստին:

Շահրամանեանը, որ նախքան 44-օրեայ պատերազմը (մինչեւ 2020թ. Մայիս) զբաղեցուցած է Արցախի ԱԱԾ տնօրէնի պաշտօնը, եղած է նաեւ Արցախի ԱԱԽ քարտուղար:

«Ինձ համար բացայայտուել են իրողութիւններ, որ որեւէ այլ հարթակում ոեւէ մէկը յայտնելու իրաւասութիւն չէր ստանալու: Եւ հիմա կարող ենք ասել, որ Քննիչ Յանձնաժողովը օժտուած է նաեւ սահմանադրական լիազօրութիւններով, ինքը ճիշդ որոշում է, որը հնարաւորութիւն է տալիս նման կարգի հարթակը օգտագործել եւ հասնել քաղաքական որոշակի իրողութիւններ արձանագրելուն», լրագրողներուն ըսաւ Յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը:

Հարցումին, թէ ի՞նչ ցնցող բացայայտումներ ըրած է Շահրամանեան, եւ հաստատապէս ո՞ր շրջանին վերաբերող՝ Քոչարեան պատասխանեց. «Յետպատերազմեան իրողութիւնների, քանի որ 44-օրեայ պատերազմը միայն այդ հատուածը չէ, պատերազմից յետոյ կան իրողութիւններ, որոնք առնչուած են 44-օրեայ պատերազմին, նաեւ այն իրողութիւններին, որոնց ականատես եղանք Արցախի հայաթափման ժամանակ»:

Քոչարեան նշեց նաեւ, որ յանձնաժողովի նիստին ժամանակ, բնականաբար, հարցումներ հնչած են նաեւ այս տարուան Սեպտեմբեր 19-ին տեղի ունեցած ատրպէյճանական ռազմական յարձակման ու անոր յաջորդած զարգացումները:



Արցախի վերջին նախագահ Սամուէլ Շահրամանեան

րուն մասին: Հարցումին՝ արդեօք բաւարարուած էք Շահրամանեանի տուած պատասխաններէն, յանձնաժողովի նախագահը արձագանգեց. «Եթէ մենք աւարտել ենք մեր աշխատանքը այս երեք ժամուայ ընթացքում, նշանակում է՝ սպառել ենք այն հարցաշարը, որի վրայ բաւական տեւական ժամանակ շխատել ենք»:


Քոչարեան ընդգծեց նաեւ, որ Շահրամանեան ծայր աստիճան անկեղծ էր, ինչպէս նախորդիւ յանձնաժողով եկած մնացեալ բոլոր հրաւիրեալները:

Ինչպէս տեղեկացուց Անդրանիկ Քոչարեանը, Դեկտեմբեր 3-ին պիտի աւարտի յանձնաժողովի լիազօրութիւններուն ժամկէտը, եւ, բնականաբար, յանձնաժողովը այլեւս ոչ մէկուն իրաւասու չ'ըլար կանչելու յանձնաժողով, փաստաթուղթեր ստանալու: Յանձնաժողովի նախագահը յայտնեց, որ յանձնաժողովին առաքելութիւնը ոեւէ մէկուն մեղաւորութիւնը արձանագրելը չէ, այլ՝ փաստագրական աշխատանք կատարելը:

Սամուէլ Գրիգորեանէն Պետութեան Պիւտճէ Պիտի Բռնագանձուի Շուրջ 4 Միլիոն Տոլար

Երեւանի ընդհանուր իրաւասութեան քրէական դատարանը հրապարակած է ԵԿՄ նախկին նախագահ Մանուէլ Գրիգորեանի (մահացած) եւ անոր կնոջ՝ Նազիկ Ամիրեանի գործով վճիռը, ըստ որուն, վերջիններս մեղաւոր ճանչցուած են ՀՀ Քրէական օրէնագիրքով նախատեսուած քանի մը յանցանքներու մէջ, ինչպէս յայտնած է ՀՀ դատական իշխանութեան թելեկրամեան ակիբը:

Վճիռի օրինական ուժի մէջ մտնելէն յետոյ Մ. Գրիգորեանէն յօգուտ ՀՀ պետական պիւտճէին պիտի բռնագանձուի շուրջ մէկ միլիարդ ութ հարիւր միլիոն դրամ, 8 ինքնաշարժ, բացի անկէ՝ շուրջ 8 հազարի հասնող «գինուորի բաժին» մակնշմամբ մթերք, հանդերձանք, դեղորայք պիտի տրուի ԵԿՄ-ին, իսկ քանի մը տասնեակ հազարի հասնող գէնք եւ գինամթերք պիտի տրուի ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան տնօրինման: Դատարանին որոշմամբ այս գործով տուած ժողի իրաւաջողող Յ. Թորոսեանին պիտի վերադարձուի Վաղարշապատի մէջ գտնուող մէկ պենզինի կայարան:




ԵԿՄ նախկին նախագահ Սամուէլ Գրիգորեան

միլիոն երկու հարիւր հազար դրամ, իսկ անոր հաշիւները, շարժական, անշարժ գոյքերը պիտի մնան կալանքի տակ՝ մինչեւ դատավճիռի կատարումը:

Ժամանակին մեծ աղմուկ հանած այս գործով ձեռքալուծելէ ետք, Մանուէլ Գրիգորեան որոշ ժամանակ ան մնաց կալանաւորուած, սակայն ազատ արձակուուցաւ առողջական պատճառներով: Ան մահացաւ 2020-ին:

ԼՈՒՐԵՐ

Վարչապետ Փաշինեան Ուղիղ Եթերով Պատասխանեց Ժողովուրդի Հարցերուն



Վարչապետ Փաշինեան ուղիղ եթերով ասուլիսի ընթացքին

Դեռ պարզ չէ՝ Ատրպեյձանը, ի վերջոյ, կը վերահաստատէ՞ երեք սկզբունքներու շուրջ խաղաղութեան պայմանագիր կնքել Հայաստանի հետ, ուղիղ եթերով, պատասխանելով խաղաղութեան գործընթացին վերաբերեալ քաղաքացիներէն մէկուն հարցումին, յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Վարչապետը յիշեցուց՝ այդ սկզբունքները համաձայնեցուած են բանակցութիւններու ընթացքին եւ այդ համաձայնեցումը արտայայտուած է Մայիս 14-ին եւ Յուլիս 15-ին եռակողմ հանդիպումներու արդիւնքներով:

Փաշինեան նաեւ սկզբունքները յիշեցուց՝ Հայաստանն ու Ատրպեյձանը կը ճանաչան միմեանց տարածքային ամբողջականութիւնը, սահմանազատման գործընթացի քաղաքական հենքը Ալեքսիս Լոսկալիսին է, տարածաշրջանային կայունութիւնը պէտք է բացուին երկիրներու իրաւագործութիւնը, ինքնիշխանութիւնը յարգելով՝ փոխադարձութեան եւ հաւասարութեան սկզբունքի հիման վրայ:

Գործադիրի ղեկավարը եւս հաստատեց, որ Նոյեմբեր 30-ին քարտէզներու եւ սահմաններու մասով նախատեսուած է սահմանագծման յանձնաժողովներու հանդիպում:

Փաշինեան ըսաւ, որ այդ քննարկումներէն երեւանը հետեւութիւններ պիտի ընէ՝ արդեօ՞ք Ատրպեյձանը պատրաստ է այդ սկզբունքներու հիման վրայ երթալ խաղաղութեան, թէ՞ Ատրպեյձանը կը հրաժարի այդ սկզբունքներէն:

«Մինչեւ այսօր մենք այդ վստահութիւնը չունենք», ընդգծեց վարչապետը:

Հայաստանի ամենամեծ խնդիրներէն մէկը շրջափակումն է, որ կը շարունակուի արդէն 30 տարիէ, նաեւ յայտնեց վարչապետը՝ յոյս չայտնելով, որ խաղաղութեամբ եւ «խաղաղութեան խաչմերուկ»ով պիտի յաղթահարեն զայն:

«Մենք ի՞նչ կը կարծենք, Մեղրիով պէ՞տք է անցնի երկաթուղի, որը կը կապի արեւելքը արեւմուտքին, այդ թւում՝ Ատրպեյձանը Նախիջևեանին, թուրքիային, այդ թւում՝ Մեղրին Երասխին եւ Հայաստանի մնացած մասին, այդ թւում՝ Հայաստանը միջազգային երկաթուղային ցանցին, այո՞, միանշանակ, եւ դա 100 տոկոս համապատասխանում է մեր երկրի շահերին», ըսաւ Փաշինեան:

Ընդգծելով, որ կայունութիւնը պէտք է բացուին երկիրներու ինք-

նիշխանութեան իրաւագործեան ներքոյ՝ հաւասարութեան եւ փոխադարձութեան սկզբունքներով՝ գործադիրի ղեկավարը նշեց, որ Ատրպեյձանը կրնայ օգտուիլ մեր երկաթուղիէն Նախիջևանի կապի համար, այն նոյն սկզբունքով, որ Հայաստանը կրնայ օգտուիլ, օրինակ, Մեղրիի եւ Երասխի երկաթուղային կապի համար:

Փաշինեան նշեց, որ կ'ուզեն բանալ նաեւ արեւելքը արեւմուտքին միացնող ճանապարհները:

Վճարումներու դիմաց Ռուսաստանի կողմէ սպառազինութիւն եւ սարքաւորում չմատակարարելու խնդիրը կայ, քաղաքացիներէն մէկուն հարցումին, թէ ինչո՞ւ չեն իրականացներ «Գոյք պարտքի դիմաց» համաձայնագրի ձեւաչափը՝ հակառակ ուղղութեամբ, իսկ մնացածին համար չեն դիմեր Միջազգային Տնտեսական Դատարան, տեղեկացուց վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ նշելով նաեւ, որ քննարկումներ կ'ընթանան որոշելու, թէ ինչ մեխանիզմով այդ խնդիրը լուծել:


«Կարող է լինել վճարուած գումարների չափով, օրինակ, Ռուսաստանին Հայաստանի Հանրապետութեան ունեցած պարտքից նուազեցումը, որը տարբերակներից մէկն է՝ միակ տարբերակը չէ, բայց էստեղ էլ Ռուսաստանը սպառազինութիւնների կարիք ունի, եւ մենք տրամադրուած ենք աշխատանքային, եւ այդ քննարկումները, յոյս ունեմ, կը բերեն յստակ արդիւնքներ, ըսաւ վարչապետը:

«Զեր ասած պողպատէ մուրճը չի գործում», ըսաւ քաղաքացիներից մէկը՝ հետաքրքրուելով վարչապետին, թէ երբ քրէական գործերով անցնող Հայաստանի երկրորդ նախագահ Ռուբեն Քոչարեանը, երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը, ԲՀԿ ղեկավար Գագիկ Մառուկեանը, ԱԺ նախկին նախագահ Յովիկ Աբրահամեանը պատասխանատուութիւն պիտի կրեն:

Փաշինեան պատասխանեց՝ յեղափոխութեան յետոյ կար հնարաւորութիւն հրապարակին վրայ հաւաքուած ժողովուրդով երթալ եւ իրականացնել ժողովուրդին պատկերացուած արդարադատութիւնը:

«Դա գուցէ կը լինէր սրտի հովանք, բայց կարծում եմ, որ այդ պարագայում մենք այսօր շատ աւելի մեծ խնդիրներ կ'ունենայինք եւ երկրում պետական հիմնարկների ջախջախուած փաստի առջ կը կանգնէինք», ըսաւ վարչապետը՝ շեշտելով, որ արդարութիւնը պէտք է ըլլայ հաստատութեանակալ:

Հայաստանի Եւ Սէուտական Արաբիոյ Միջեւ Հաստատուեցան Դիւանագիտական Յարաբերութիւններ



Հայաստանի Եւ Սէուտական Արաբիոյ դեսպանները կը ստորագրեն դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու արձանագրութիւնը

Հայաստանի Հանրապետութեան եւ Սէուտական Արաբիոյ Թագաւորութեան միջեւ ստորագրուած է դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին արձանագրութիւն:

Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան հաղորդագրութեան համաձայն, արձանագրութիւնը ստորագրուած է Ապու Տապիի մէջ՝ ԱՄԷ-ի մէջ ՀՀ դեսպան Կարէն Գրիգորեանի եւ Սէուտական Արաբիոյ դեսպան Սուլթան պըն Ապտալա Ալ-Անքարի կողմէ:

«Երկու երկիրները հաստատել են դիւանագիտական յարաբերութիւններ՝ առաջնորդուելով երկկողմ յարաբերութիւններն ամրապնդելու եւ համագործակցութեան շրջանակն ընդլայնելու, միջազգային անվտանգութեան եւ խաղաղութեան ապահովմանն աջակցելու ձգտումով:

«Դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման մասին փաստաթուղթն արձանագրում է երկու երկրների ցանկութիւնը՝ «ամրապնդելու արդիւնաւէտ համագործակցութեան կապերը քաղաքական, տնտեսական, արհեստագիտական, զարգացման, առեւտրի եւ մշակութի ոլորտներում՝ տար-

բեր բնագաւառներում ջերմ յարաբերութիւնների հաստատման երկուստեք ձգտումներն իրականացնելու նպատակով», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Նախօրէին այս մասին վարչապետ Նիկոլ Փաշինեան խօսեցաւ՝ դիւանագիտական յարաբերութիւններու մտաւորութեան հաստատումը համարելով էական զարգացում:

Սէուտական Արաբիան կը հրաժարէր Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելէ դարաբաղեան հակամարտութեան պատճառով: Ռիատ յայտարարած էր՝ Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ չի հաստատեր, քանի դեռ Ատրպեյձանի տարածքային ամբողջականութիւնը չէ վերականգնուած:

Քարիւղով հարուստ թագաւորութեան քաղաքականութիւնը Երեւանի նկատմամբ փոխուեցաւ, երբ քանի մը տարի առաջ վատթարացան Ռիատի յարաբերութիւնները Անգարայի եւ անոր սերտ դաշնակից Պաքուի հետ:

Քաղաքականութեան փոփոխութեան նախանշաններէն էր 2021 թուականի Հոկտեմբերին Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանի այցը Ռիատ:

Հայաստանի Վարչապետը Եւ Քորեայի Նախագահը Պայմանաւորուած Են Սեուլի Եւ Երեւանի Մէջ Դեսպանատուներ Բանալ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է Քորեայի Հանրապետութեան նախագահ Եոն Սոք Եոլի հետ: Հեռախօսազրոյցի արդիւնքով, փոխադարձութեան հիմունքներով երկու մայրաքաղաքներուն մէջ դեսպանատուներ բանալու պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է:

Զրուցակիցները անդրադարձած են հետաքրքրութիւններ կայացնող շարք մը հարցերու: ՀՀ վարչապետը եւ Քորեայի Հանրապետութեան նախագահը երկկողմ յարաբերութիւններու հետագայ զարգացման նպատակով պատրաստակամութիւն յայտնած են:

Գերմանիոյ Կառավարութիւնը 84,6 Միլիոն Եւրօ Ծգնութիւն Պիտի Տրամադրէ Հայաստանին

Գերմանիոյ կառավարութիւնը 84,6 միլիոն եւրօ օգնութիւն պիտի տրամադրէ Հայաստանին՝ որպէս դրամաշնորհներ ու վարկեր: Երեւանի մէջ կայացած մամուլի համատեղ ասուլիսին ընթացքին այդ մասին յայտնած են Հայաստանի տնտեսութեան նախարար Վահան Քերրոբեանը եւ Գերմանիոյ տնտեսական զարգացման ու համագործակցութեան պետական քարտուղար Նիա Աննենը:

Վերջինիս խօսքով՝ այդ յստակ ազդանշան է ամբողջ աշխարհին, որ Գերմանիան ու Հայաստանը համագործակցութեան նոր ուղի կը բանան: «Հայաստանը կրկին ապացուցած է, որ յանձնառու է ժողովրդավարութեան, ժողովրդավարական հասարակութեան», ընդգծած է Գերմանիոյ պետական քարտուղարը: Երեւանի մէջ երկու երկիրներու միջկառավարական երկօրեայ բանակցութիւններ տեղի ունեցած են:

Կազմի ճետ կապուած՝ Մէկ Մատակարարէ Կախուած Ըլլալը Անվտանգային Վտանգներ Կը Պարունակէ»։ ԳՅ Նախագահ Խաչատուրեան

«Կազմի ճետ կապուած բոլորս ենք գիտակցում, թէ ինչպիսի անվտանգային վտանգներ է պարունակում, երբ որ մենք կախուած ենք ընդամենը մէկ մատակարարից», «Հայաստանի ուժանիւթի բնագաւառի ներկան եւ ապագան» խորագրով համաժողովին ժամանակ յայտարարեց նախագահ Վահագն Խաչատուրեանը՝ շեշտելով, որ կապ չունի, թէ մատակարարը ով է, ինչ է:



Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեան

«Շուկայական տնտեսութեան մէջ որեւէ բնագաւառում, որտեղ կայ մենաշնորհ, այնտեղ գարգացում չի կարող լինել», ըսաւ նախագահը՝ կարեւորելով ոլորտին մէջ բարեփոխումները:

Որպէս լրջագոյն աշխատանք խաչատուրեան շեշտեց ԱՄՆ-ի ՄԶԳ գործակալութեան աշխատանքը՝ նշելով, որ այն մշտապէս աջակցութիւն ցուցաբերած է Հայաստանին այս բարեփոխումները շարունակական դարձնելու համար:

«Մեր ուժանիւթային հաւասարակշռութեան մէջ կտրուկ փոփոխութիւններ են տեղի ունենում եւ սպասուելիք է մասնակաշրջանում այդ փոփոխութիւններն աւելի մեծանալու են», ըսաւ նախագահը՝ վկայակոչելով կառավարութեան որոշումը:

«Փոփոխութիւնների արդիւնքում վերականգնուող ուժանիւթի աղբիւրների կիրառմամբ արտադր-

ուած էրեկտրուժի մասնաբաժինը վերջնական սպառման մէջ 2030 թուականին, ներառեալ նաեւ խոշոր հիտրոկայանները, կը հասնի 50 տոկոս, իսկ 40 թուականին՝ 60 տոկոս: Այստեղ, եթէ մենաշնորհային կառավարման ցանկութիւնը լինի, խոչընդոտ է լինելու, պէտք է կարողանալ կարգաւորող մարմինների միջոցով այդ ախորժակը նուազեցնել», ըսաւ Խաչատուրեան: Հայաստանը ներկայիս կազ կը ստանայ Ռուսաստանէն եւ Իրանէն, Իրանին կազի դիմաց էրեկտրակա-նութիւն կը մատակարարէ:

Խաղաղութեան Պայմանագիրը Կրնայ Կնքուիլ 3առաջիկայ 15 Օրուան Ընթացքին, Եթէ Պարուն Քաղաքական Կամք Դրսուորէ Ալեւ Սիմոնեան

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեւ Սիմոնեանի խօսքով՝ Ատրպէյճանի ճետ խաղաղութեան պայմանագիրը կրնայ կնքուիլ յառաջիկայ 15 օրուան ընթացքին, եթէ Պաքուն քաղաքական կամք դրսեւորէ:

«Այսօր Նոյեմբերի 28-ն է, ցանկութեան պարագայում կարելի է գալիք 15 օրուայ ընթացքում խաղաղութեան պայմանագիրը կնքել, եթէ Ատրպէյճանի իշխանութիւնն իրօք քաղաքական կամք դրսեւորի: Կարելի է ասել՝ սկզբունքային գրեթէ բոլոր հարցերի շուրջ

եկել ենք համաձայնութեան», լրագրողներու ճետ գրոցին ըսաւ Սիմոնեան:

Աժ նախագահը նշեց, որ հայկական կողմը ամենայն պատասխանատուութեամբ կ'երթայ խաղաղութեան. «Չեմ հասկանում՝ ինչու է Ատրպէյճանը տարբեր հարթակների հանդիպումներից խուսափում: Չեմ հասկանում, թէ ժամանակ ձգելն ի՞նչ է տալու Ատրպէյճանին եւ տարածաշրջանին, երբ խօսում են խաղաղութեան մասին, սակայն հրաժարուում են ստորագրելուց: Գնդակն Ատրպէյճանի դաշտում է»:

Ռուսաստանը Յոյսով Է, Որ Որոշ Ժամանակ Անց Հայաստանը Պիտի Վերսկսի Լիարժէք Մասնակցութիւնը ՀԱՊԿ Գործունէութեան

ՀԱՊԿ անդամ բոլոր երկիրները միակարծիք են դաշինքի գարգացման հետագայ ամրապնդման անհրաժեշտութեան հարցով, Ռուսաստանը յոյսով է, որ Հայաստանը, ի վերջոյ, պիտի վերսկսի լիարժէք մասնակցութիւնը Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) գործունէութեան: Այս մասին ըսած է Քրեմլինի ներկայացուցիչ Տմիթրի Փեսքովը:

«Հայաստանի դիրքորոշումը բոլորին յայտնի է, մենք չենք

կրնար բոլոր կէտերով համաձայնիլ: Բոլոր երկիրները միակարծիք են այս դաշինքի հետագայ ամրապնդման եւ զարգացման հարցով, ուստի յոյսով ենք, որ սա այն ճանապարհն է, որով մենք պիտի երթանք: Յոյս ունինք, որ մեր հայ ընկերները նոյնպէս ի վերջոյ պիտի վերսկսին իրենց լիարժէք մասնակցութիւնը Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան գործունէութեան», ըսած է Փեսքով:

«Հայաստան» Հիմնադրամի Թելեթոն

Շարունակուած էջ 1-էն
կան մարմիններուն, բոլոր գործընկերներուն եւ նուիրատուներուն

րուն շարունակական աջակցութեան, անմնացորդ նուիրումի եւ Հայրենիքի կողքին կանգնելու համար, ինչին շնորհիւ պիտի բարե-

«Մանկական Եւրոտեսիլ 2023» Երգի Մրցոյթին Հայաստանը Գրաւեց Երրորդ Դիրքը



«Մանկական Եւրատեսիլ 2023» մրցոյթին Հայաստանի պատուիրակ «Yan Girls» խումբի անդամները

«Մանկական Եւրատեսիլ 2023» երգի միջազգային մրցոյթին, որ տեղի ունեցաւ Նոյեմբեր 26-ին Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ, յաղթեց Ֆրանսան: Ֆրանսան յաղթած էր նաեւ «Մանկական Եւրատեսիլ 2022» մրցոյթին՝ գայն տանելով Նիս:

Ըստ մրցոյթի քուէարկութեան կարգին՝ մասնակից երկիրը առցանց քուէարկութեան միջոցով կրնար ձայն տալ նաեւ իր պատուիրակին: Քուէարկութիւնը մեկնարկած էր Նոյեմբեր 24-էն jesc.tv կայքով, ուր հնարաւոր էր դիտել բոլոր մասնակիցներու ելոյթները:

րուն նախնական տարբերակները: Քուէարկութիւնը աւարտեցաւ մրցոյթին օրը՝ համերգէն անմիջապէս առաջ: Այն վերսկսաւ մրցոյթի ընթացքին՝ բոլոր ելոյթներէն յետոյ: Քուէարկութիւնը տեւեց 15 վայրկեան: Հեռուստադիտողի քուէն վերածուեցաւ միաւորներու՝ դառնալով մրցոյթի արդիւնքին մէկ մասը, միւս մասը ձեւաւորուեցաւ դատական կազմի գնահատականի հիման վրայ: Հայաստանի պատուիրակ «Yan Girls» խումբը «Do It My Way» երգով գրաւեց երրորդ դիրքը:

ԱՄՆ Պիտի Կիրառէ Գործիքակազմը

Շարունակուած էջ 1-էն
սենք, թէ կողմերուն միջեւ երկխօսութիւնը ինչ ընթացք պիտի ստանայ: Մեզի յայտնի է, որ անոնք շահագրգռուածութիւն յայտնած են յառաջիկային կնքելու խաղաղութեան համաձայնագիր: Կը փափաքէինք տեսնել, որ այն իրականութիւն կը դառնայ», յայտնած է ՕՊՐայըն:

Պիւնքընի Հեռախօսագրոյցը Փաշինեանի Ու Ալիեւի Հետ

ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ Մեթիւ Միլլըր տեղեկացուցած է Հայաստանի վարչապետին ու Ատրպէյճանի նախագահի հետ ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պրինքընի առանձին հեռախօսագրոյցներու մասին:


ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հեռախօսագրոյցին պետական քարտուղար Էնթոնի Պրինքըն քննարկած է ԱՄՆ-ի աջակցութիւնը Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ կայուն եւ արժանապատիւ խաղաղութեան համաձայնագրին հասնելու ջանքերը: Ըստ հարցազրույցի՝ «պետական քարտուղարը վերահաստատեց Միացեալ Նահանգներու շարունակական աջակցութիւնը Հայաստանի ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան եւ ընդգծեց Հայաստանի հետ երկկողմ համագործակցութիւնը մեծցնելու ջանքերը»:

բերը», քանի որ Ուաշինկթըն կ'աջակցի վերջինիս՝ բարեկեցիկ եւ ժողովրդավարական ապագայի վերաբերեալ տեսլականը: Իր հերթին, Պետական Քարտուղարութեան խօսնակի հաղորդագրութեան համաձայն, նոյն օրը պետական քարտուղար Էնթոնի Պրինքըն գրուցած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: «Պետական քարտուղարը ողջունած է Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ երկարատեւ եւ արժանապատիւ խաղաղութեան համաձայնագիր կնքելու նախագահ Ալիեւի յանձնառութիւնը: Պետական քարտուղարը կը գիտակցի այն ամբողջ տառապանքը, որ այս երկարատեւ հակամարտութիւնը պատճառած է ինչպէս Ատրպէյճանցիներուն, այնպէս ալ հայերուն, եւ ընդգծած այն օգուտները, որոնք խաղաղութիւնը պիտի բերէ բոլորին տարածաշրջանին մէջ: Պետական քարտուղարը քննարկած է Ատրպէյճանի հետ մեր [ԱՄՆ-ի] ամուր յարաբերութիւնները, մասնաւորապէս յարաբերութիւններուն մէջ առկայ վերջին շրջանի մտահոգիչ դրոյթները, ինչպէս նաեւ խօսած է համագործակցութեան ամրապնդման հնարաւորութիւններու, յատկապէս խաղաղ գործընթացին շուրջ, եւ բարձր մակարդակով ներգրաւուածութեան կարեւորութեան մասին», ըսուած է Պետական Քարտուղարութեան խօսնակին անունով տարածուած հարցազրույցի մէջ:

լաուրի մեր տասնեակ հազարաւոր հայրենակիցներուն կեանքը», յայ-

տարարած է «Հայաստան» համահայկական հիմնադրամը:

PM Nikol Pashinyan Answers Publics Questions During a Live TV Broadcast



YEREVAN — Armenian Prime Minister Nikol Pashinyan has said any decision about Yerevan’s continued membership in the Russian-led Collective Security Treaty Organization (CSTO) will be based on “its own state interests” after he declined to attend the current summit in Minsk.

During a live question-and-answer TV program with the public on November 24, Pashinyan also said the country was looking for options to reduce its outstanding financial debt to Russia by several means, including using the payments it has made for weapons that Moscow has failed to deliver.

“We will focus on the state inter-

ests of Armenia, and if we have or haven’t made any decision at this moment, our benchmark is the state interests of Armenia,” Pashinyan said during an almost nine-hour-long broadcast when asked by a caller why Yerevan remained a member of the CSTO defense bloc.

“At the moment, our records show that the CSTO’s de facto actions or inaction do not address its obligations toward the Republic of Armenia, that is, in this sense, the CSTO’s actions are not in line with Armenia’s interests. And we raise this issue in a transparent way,” Pashinyan added.

A caller also asked Pashinyan

why his government wasn’t considering the reversal of a controversial deal that Russia made with Yerevan in the early 2000s to take possession of some of Armenia’s lucrative strategic assets in exchange for the South Caucasus country’s debt.

Pashinyan said Armenia was looking at several options to reduce its debt to Russia, including the use of payments it has made for weapons that Moscow has failed to deliver.

The Armenian prime minister gave no figures, but again confirmed that there were problems with Russia fulfilling its arms contracts with Armenia.

He said reducing Armenia’s debt to Russia could be one of the mechanisms of settling the issue, but that there were other options as well.

“We know that Russia itself needs weapons. In this context, we expect to settle this issue in a routine working manner. I hope that our discussions will lead to concrete results,” Pashinyan said.

Azerbaijan Still Vague on Commitment to Peace

PM Pashinyan said that it still remains unclear whether Azerbaijan will ultimately commit to signing a

Secretary of State Antony Blinken Again Talks to Armenian, Azeri Leaders

WASHINGTON, DC — U.S. Secretary of State Antony Blinken telephoned the leaders of Armenia and Azerbaijan late on Monday to discuss ways of kick-starting Armenian-Azerbaijani talks on a peace deal sought by Western powers.

Armenian Prime Minister Nikol Pashinyan and Blinken discussed issues related to the regional agenda, bilateral relations and Armenia-Azerbaijan normalization process, the Prime Minister’s Office said in a read-out.

The humanitarian issues of over 100,000 forcibly displaced persons of Nagorno-Karabakh, and the Armenian government’s steps aimed at overcoming these issues were also discussed. The importance of support by the international community was underscored.

Blinkens separate phone calls followed Baku’s cancellation of a meeting in Washington of the Armenian-Azerbaijani foreign ministers scheduled for November 20. The Azerbaijani

Continued on page 4

Continued on page 3

Hayastan All Armenian Fund’s Telethon-2023 Raised \$8,4 Million Worldwide



YEREVAN — On November 23rd, 2023, the Hayastan All Armenian Fund held its 26th annual Telethon under the slogan “For You Armenia”, which raised around USD 8,4 million as of today. It’s worth noting that the Fund’s worldwide fundraising events are still ongoing, and the results will be finalized and announced at the end of the year.


The donations received for the Telethon-2023 are as follows: Armenia – 552,372 USD, France – 3,250,000 USD, the USA – 3,100,000 USD, Toronto (Canada) – 500,000 USD, Great Britain – 450,000 USD, Argentina – 160,690 USD, the Netherlands – 100,000 USD, Brazil – 92,000 USD,

Germany – 66,400 USD, Switzerland – 50,000 USD, Australia – 27,000 USD, Austria – 25,900 USD and Romania – 4,360 USD.

The amounts raised during “For You Armenia” Telethon will be used for enhancing the living conditions of our displaced compatriots from Artsakh and fostering development of the border communities.

We extend our gratitude to our affiliates, all our partners and donors for their continued support, unwavering dedication and for standing with Homeland. Thanks to these joint efforts we will make difference in the lives of tens of thousands of our compatriots.

Armenia and Saudi Arabia Establish Diplomatic Relations



ABU DHABI — On November 25, a protocol on the establishment of diplomatic relations was signed between the Republic of Armenia and the Kingdom of Saudi Arabia.

The protocol was signed in Abu Dhabi by the Ambassador of the Republic of Armenia to the UAE, Karen Grigoryan, and the Ambassador of the Kingdom of Saudi Arabia to the UAE, Sultan bin Abdullah Al-Angari.

The two countries established diplomatic relations guided by the intention to strengthen bilateral relations and expand the scope of cooperation as well as to support international security and peace.

The document on the establishment of diplomatic relations indicates both countries’ desire “to consolidate the bonds of fruitful cooperation between the two countries in the fields of politics, economy, technology, development, trade and culture, and to embody the two countries’ aspirations towards establishing the best relations and cordial connections between them in various fields”.

In October 2021 then Armenian President Armen Sarkissian visited Riyadh to participate at the opening ceremony of an international confer-

Continued on page 3

CSTO Leaders Meet In Belarus for Summit Skipped by Armenia



MINSK — Leaders from five former Soviet countries that are members of the Collective Security Treaty Organization (CSTO) met in the Belarusian capital of Minsk on Thursday for a summit that has been skipped by their formal ally, Armenia.

Russian President Vladimir Putin and the leaders of Kazakhstan, Kyrgyzstan and Tajikistan attended the events hosted by Belarus's Alyaksandr Lukashenka, with Armenia's flag also flying at the Minsk airport and at the venue of the gathering, the Independence Palace, even though neither Prime Minister Nikol Pashinyan, nor other Armenian officials have participated in the workings of the summit that was preceded by meetings of defense and foreign ministers and security council secretaries of member states on Wednesday.

Lukashenka said Armenia's absence from the summit was discussed by the other leaders during their meeting held behind closed doors.

"We will not hide the fact that we also discussed the situation in the Caucasus and certain dissatisfaction of one of the CSTO members. We have come to a joint conclusion that there have always been problems, there are and there will be problems. But if we are to solve these problems, we should do it at the negotiation table and not through unreasonable demarches," the Belarusian leader said, implying

Pashinyan's refusal to attend the summit.

In an apparent jibe at the Armenian leader Lukashenka said that "only fly-by-night politicians" can create a situation of conflict "by making a gift to those who are not interested in strengthening the security of the CSTO member states."

"This is irresponsible and short-sighted," he said, as quoted by local media.

At the same time, the Belarusian leader expressed a hope to see "Armenian friends" at upcoming economic events in St. Petersburg, Russia.

The summit also approved the appointment of Russian Colonel General Andrei Serdyukov to the post of the head of the Joint Staff of the CSTO and a regulation on the joint press center of the CSTO.

CSTO Secretary-General Imangali Tasmagambetov will visit Yerevan upon the conclusion of the organization's summit in Minsk to hand over the signed documents to the Armenian side, Belarusian Foreign Minister Sergei Aleinik told reporters before the start of the session of the CSTO Collective Security Council.

He voiced hope that Armenian would join the decisions made during the summit. Aleinik stressed that the task of the CSTO is to maintain the solidarity of all member countries.

Armenian, Korea Keen to Develop Bilateral Cooperation



YEREVAN -- Prime Minister Nikol Pashinyan had a telephone conversation with the President of the Republic of Korea Yoon Suk Yeol.

The interlocutors praised the recent activity in bilateral relations, as a result of which an agreement was reached to open Embassies in the two

capitals on the basis of reciprocity.

A number of issues of bilateral interest were discussed.

The Prime Minister of the Republic of Armenia and the President of the Republic of Korea expressed their willingness to contribute to the further development of bilateral relations.

Germany to Provide 84,6 Million Euros in Aid to Armenia



YEREVAN — The German government will provide 84.6 million euros (about \$92.2 million) in aid to Armenia in the form of grants and loans, Federal Ministry for Economic Cooperation and Development Niels Annen announced on Wednesday.

Speaking at a joint press conference with Armenia's Minister of Economy Vahan Kerobian in Yerevan, Niels Annen said that "it is a clear message to the whole world that Germany and Armenia are opening a new way of cooperation."

"Armenia has once again proven that it is committed to democracy, a democratic society," the German official stressed.

The announcement came after

two-day intergovernmental negotiations focused on developing Armenian-German cooperation that were held in Yerevan on November 21-22.

The talks were the first intergovernmental negotiations between Armenia and Germany since 2014.

A separate aid is envisaged to the Armenian government for receiving and integrating the forcibly displaced persons of Nagorno-Karabakh.

Investments will be made in the renewable energy sector, which will allow Armenia to lower electricity prices.

"We will focus on strengthening Armenia's energy independence, which was highlighted in our cooperation negotiations," the German official said.

Armenian Authorities Seek to Confiscate 90 Properties and \$213 Million from Gagik Tsarukyan

YEREVAN — The Armenian authorities have moved to confiscate hundreds of millions of dollars worth of assets belonging to Gagik Tsarukyan, one of Armenia's richest men.

The assets include the largest of Tsarukyan's companies and about 90 properties owned by him or members of his family. The authorities are also seeking to seize over 86 billion drams (\$213 million) in revenue generated by them. All this may well account for most of the vast fortune made by the tycoon since the early 1990s.

